ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ
ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 45 90 47
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:
I SSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՇԱԲԱԹ
6 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014Թ. № 32 (340)
www.syuniacyerkir.am

...Արեւելյան կողմից սահմանվեց մեծ եւ առաջին՝ Սիսական տոհմի նահապետությունը, եւ հայոց Վաղարշակ թագավորը հրաման տվեց Սիսականներին՝ լինել հրամանատար արքունի բոլոր զորքերին ու իր թագավորության երկրորդը եւ պատերազմով շարունակ դեմ կանգնել Հոնաց դռանը:

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Ա. ԱՎԱԳՅԱՆԻ

Ագարակ քաղաքը 65 տարեկան է

Ավելի քան 5000 բնակիչ ունեցող Ագարակ քաղաքը նոյեմբերի 21-ին իր 65-ամյակին նվիրված միջոցառումների շարքն սկսեց Սայաթ-Նովա փողոցում քաղաքի մանուկներին նվիրելով նոր ու գեղեցիկ կահավորված խաղահրապարակ: Իսկ մինչ դրա հանդիսավոր բացումը ագարակցիները Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին եւ այլ հյուրերի դիմավորեցին աղուհացով:

Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանը, կտրելով կարմիր ժապավենը, նորաբաց խաղահրապարակի մուտքի մոտ խմբված ներկաներին ներս հրավիրեց, ու այն իսկույն լցվեց մանուկներով. նրանք շտապում էին օգտվել հատկապես գրավիչ սղարանից: Խաղահրապարակին մերձ նաեւ նոր բասկետբոլի դաշտ էր կառուցվել: Հայկական եռագույնը խորհրդանշող սալահատակով ու հարմարավետ նստարաններով բարեկարգ տարածքը հետագայում կանաչապատ այգու տեսք էլ կստանա, որի համար առաջին ծառերը՝ լորենիներ եւ կատալպաներ, այդ օրը տնկեցին Սյունիքի մարզպետը, Ագարակի քաղաքապետն ու այլ հյուրեր: Ագարակի մանուկներին այդ ամենը նվիրել են քաղաքապետարանն ու «Մեղրի-Ագարակ» հիմնադրամը՝ ծախսելով մոտ 16 մլն դրամ:

Այնուհետեւ հյուրերն Ագարակի կենտրոնական հրապարակում ականատես եղան քաղաքի արվեստի դպրոցի սաների՝ տարբեր ազգերի պարերի համադրույթ-ելույթին:

Տոնական օրվա հաջորդ եւ վերջին հանգրվանը քաղաքի մշակույթի կենտրոնում կայացած հանդիսավոր նիստն էր: Այն բացեց Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանը: Նա, շնորհավորելով բոլորին, շնորհակալություն հայտնելով քաղաքն ու կոմբինատը կառուցողներին, նաեւ համայնքային իշխանությանն աջակցող եւ իրենց հետ համագործակցող կառույցներին, ընդհանուր գծերով ամփոփեց Ագարակում վերջին հինգ տարում կատարվածը, մատնանշեց հետագա անելիքները:

Քաղաքապետի տեղակալ Արմեն Սամվելյանն առավել մանրամասն՝ թվերով եւ կոնկրետ փաստերով, հաշվետվություն ներկայացրեց քաղաքապետարանի գործունեության, կատարած ծախսերի, քաղաքում նոր բացված կառույցների, ապագա աշխատանքների մասին:

«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության արհեստակցական կազմակերպության նախագահ Սամվել Միքայելյանը խոսեց քաղաք-կոմբինատ համագոր-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 2

Քաղաքը բոլորիս տունն է, եւ մեր առաջնահերթ խնդիրներից մեկը Ագարակի հանդեպ հոգատար վերաբերմունքի ձեւավորումն է

Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանի ելույթը քաղաքի հոբելյանին նվիրված հանդիսավոր նիստում

65 տարի առաջ աշխարհի՝ մեզ հասած այս անկյունում ձեւավորվեց Ագարակը՝ սկզբում որպես ավան, Հայաստանի անկախացումից հետո՝ արդեն որպես քաղաք:

Երբեմնի արդյունաբերական բանավանը տարիների ընթացքում վերածվեց ժամանակակից քաղաքի՝ իր բոլոր սոցիալական ենթակառուցվածքներով, եւ այսօր հավաքվել ենք նշելու մեր քաղաքի հերթական տարեդարձը:

Հոբելյանի կապակցությամբ իմ երախտագիտությունն ու շնորհակալությունն եմ հայտնում բոլոր այն մարդկանց, ովքեր կառուցեցին մեր քաղաքն ու Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը, հարգանքս՝ այն անհատներին, ովքեր իրենց ջանքն ու եռանդը, ուժն ու միտքը ներդրեցին նոր բնակավայրն ու նոր ձեռնարկությունը սերունդներին հանձնե-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 7

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Ն. ԴԱՎԹՅԱՆԻ

Համայնքի ընթացքը. թվեր եւ փաստեր

Անցյալ հինգ տարիների ընթացքում քաղաքի զարգացման հիմնական ուղղություններն են եղել բնակչության կենսապայմանների բարելավումը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացումը, բյուջետավարման օպտիմալացումը եւ այլն:

Այսօր աշխատանքի ռացիոնալ բաժանման արդյունքում համայնքը ՏԻՄ գործառույթը համեմատաբար բարձր որակով իրականացնում է 130 աշխատողի օգնությամբ՝ 2008-ի 162-ի փոխարեն:

Մասնավորապես, Ագարակ համայնքի 2014թ. բյուջեն կազմում է շուրջ 200 մլն դրամ, որը 2008թ. համեմատությամբ աճել է 2,5 անգամ: Հատկանշական է, որ սեփական եկամուտները կազմում են բյուջեի 60 տոկոսը՝ 2008-ի 35 տոկոսի փոխարեն:

Բյուջեի եկամուտների ձեւավորմանը մեծ մասնակցություն է ունենում Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը. նրա ճիշտ սոցիալ-տնտեսական քաղաքականության եւ բարի կամքի դրսեւորման արդյունքում բյուջեի եկամուտների 20 տոկոսը ձեւավորվում է կոմբինատի կողմից հատկացվող սուբվենցիայի միջոցով:

Ինչ վերաբերում է ագարակցիների սոցիալ-տնտեսական կյանքը սպասարկող ենթակառուցվածքներին, ապա համարձակորեն կարելի է նշել, որ քաղաքի սոցիալ-տնտեսական գործառույթ իրականացնող բոլոր կազմակերպություններն արդիականացվել կամ արդիականացվում են:

Մասնավորապես, 2009-10թթ. «Հայաստանի սոցիալական ներդրումներ» հիմնադրամի ֆինանսավորմամբ եւ «Մեղրի-Ագարակ» հիմնադրամի համաֆինանսավորմամբ 87 մլն դրամի ներդրում է կատարվել Ագարակի մշակույթի պալատի հիմնանորոգման եւ գույքով համալրման համար:

«ՋՊՄԿ» ՓԲԸ-ի, «Մեղրի-Ագարակ» հիմնադրամի ֆինանսավորմամբ եւ քաղաքապետարանի ֆոնդային միջոցներով, 87մլն դրամի ներդրմամբ, 2012-14թթ. հիմնանորոգվել եւ գույքով համալրվել են Ագարակի մսուր-մանկապարտեզի առաջին մասնաշենքը, հարակից խաղահրապարակը, երկրորդ մասնաշենքի առաջին հարկը եւ մարզադահլիճը: Այստեղ նախադպրոցական դաստիարակություն է ստանում 220 երեխա:

Ավարտին է մոտենում «Հայաստանի սոցիալական ներդրումներ» հիմնադրամի ֆինանսավորած 108 մլն դրամ արժեքով Ագարակի արվեստի դպրոցի հիմնանորոգման եւ գույքով համալրման ծրագիրը: Արվեստի դպրոցի յոթ բաժնում սովորում է 186 երեխա:

Ագարակի միջնակարգ դպրոցում ծնողների եւ «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ի արհմիության նախաձեռնությամբ վերանորոգված տասնյակից ավելի դասասենյակների հետ այս տարի շահագործման է հանձնվել նաեւ ժամանակակից գրադարանը՝ է՛լ ավելի հագեցնելով ագարակցի 611 դպրոցականի առօրյան:

2010-12թթ. ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգի բարելավման ծրագրի շրջանակներում իրականացվել է խմելու ջրի ցանցի փոփոխություն, մաքրման կայանի եւ օրվա կարգավորիչ ջրամբարների վերանորոգում, եւ քաղաքում ապահովվել է 24-ժամյա ջրամատակարարում: Ավարտին են մոտենում ոռոգման ներքին ցանցի վերանորոգման աշխատանքները:

2009 թվականից ի վեր Ագարակ քաղաքում իրականացվել է ավելի քան 4կմ առավել բանուկ ճանապարհահատվածների ասֆալտապատում ու հարակից տարածքի բարեկար-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 8

Ագարակ քաղաքը 65 տարեկան է

Ագարակ քաղաքը 65 տարեկան է

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

ծակցության, համայնքում արհմիության դերի, կատարած ներդրումների մասին:

«Մեղրի-Ագարակ» հիմնադրամի տնօրեն Վիլեն Համբարձումյանը հաշվետվություն ներկայացրեց այդ կառույցի աշխատանքների, ֆինանսական ծախսերի ուղղվածության, հետագա անելիքների մասին:

Հանդիսության ներկաներին շնորհավորանք եւ ողջույն հղեց Ագարակի միջնակարգ դպրոցի տնօրեն Էռնա Բարխուդարյանը՝ ամփոփելով կրթօջախի ձեռքբերումները, ներկայացնելով համագործակցությունը համայնքի հետ, դերը քաղաքի կյանքում: Իսկ Մեղրու սահմանապահ զորքերի հրամանատարի պաշտոնակատար Ալեքսեյ Վասսավը, շնորհավորելուց բացի, շնորհակալություն հայտնեց քաղաքապետին համագործակցության համար:

Ագարակի քույր քաղաք (2008 թվականից) բելառուսական Սոլիգորսկից տեսագրության ձեւով էին ուղարկել շնորհավորանքի ջերմ ու սրտաբուխ խոսքերը: «Ագարակի ՊՄԿ» աշխատակիցները եւս տեսագրությամբ շնորհավորեցին քաղաքի տարեդարձը: Ցուցադրվեց նաեւ Ագարակի ստեղծման պատմությունը, քաղաքի այսօրը, բոլոր ենթակառուցվածքներն ու բնագավառները, ձեռքբերումները ներկայացնող փոքրիկ տեսաֆիլմ:

Տարեդարձի առթիվ քաղաքապետ Մխիթար Զաքարյանն Ագարակի պատվավոր քաղաքացու կոչում շնորհեց տարբեր բնագավառներում ներդրում ունեցող չորս ագարակցու՝ Սերյոժա Գաբրիելյանին, Լյուդվիգ Համբարձումյանին, Անահիտ Անտոնյանին, Լիբիկ Օհանյանին: Համայնքի ղեկավարը նշեց, որ իրականում արժանավորները շատ են, բայց քանի որ հնարավոր չէ բոլորին նման կոչում տալ, այս մարդկանցից յուրաքանչյուրն իր բնագավառը ներկայացնող մարդկանց հավաքական կերպարն է, եւ հանձինս նրանց ինքը գնահատում է բոլորին:

Պարոն Զաքարյանը տարեդարձի առթիվ նաեւ 11 հոգու պատվոգիր, 11-ին էլ շնորհակալագիր հանձնեց:

Տոնական օրն ավարտվեց Ագարակի արվեստի դպրոցի սաների գեղեցիկ երգչախմբային եւ պարային կատարումներով, հայրենասիրական ոգին ներկայացնող համարով ներկայացավ նաեւ պատանի երկրապահների ջոկատը:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանն ու Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը դիտում են արվեստի դպրոցի սաների պարային ելույթը

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա. ԱՎԱԳՅԱՆԻ

Ագարակի նոր խաղահրապարակը Սայաթ-Նովա փողոցում

Շնորհավորանք

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԷՌՆԱ ԲԱՐՈԽՈՒԴԱՐՅԱՆ

Ագարակի միջնակարգ դպրոցի տնօրեն

Այստեղ աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ իր ուժերի ներածին չափով նպաստում է վաղվա օրվա կառուցմանը: Ուսուցիչների լավ աշխատանքի արդյունքն են հաջողությունները, որոնց դպրոցը հասել է տարիներ շարունակ: Միայն 2013-14 ուստարում 9-րդ դասարանն ավարտած 38 աշակերտից 3-ն արժանացել է կարմիր վկայականի, 66 շրջանավարտից 36-ն ընդունվել է բուհ:

12գ դասարանի աշակերտուհի Սերինե Դավթյանը տարածաշրջանում միակն էր, ով արժանացավ ոսկե մեդալի եւ անվճար ընդունվեց ԵՊՀ: 11ա դասարանի աշակերտուհի Մերի Մարգարյանը Երեւանում կայացած գերմաներենի մրցույթում հաղթող ճանաչվեց եւ ամռանը մեկ ամսով մեկնեց Գերմանիա:

Առարկայական օլիմպիադայի տարածքային փուլում մեր աշակերտները գրավել են գրեթե բոլոր մրցանակային տեղերը՝ 51 տեղ: Մարզային փուլին մասնակցած 36 աշակերտից ինը գրավել է 1-ինից 3-րդ հորիզոնականները: Նրանցից երեքն իրավունք է նվաճել մասնակցելու հանրապետական փուլին եւ արժանացել դիպլոմների:

Դպրոցը մասնակցել է «Հայ ասպետ» հեռուստախաղին եւ անցել կիսաեզրափակիչ փուլ, որտեղ էլ զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը եւ, որպես լավագույն թիմերից մեկը, ստացել արշավներին մշտապես մասնակցելու իրավունք:

Տարեվերջին 83 աշակերտ պարգեւատրվել է ՀՀ ԿԳ նախարարի գովասանագրով: Ուսումնական հաջողություններից զատ դպրոցը հաջողություններ է ունեցել նաեւ սպորտի բնագավառում: Մեղրիում կայացած շախմատի մրցումների տարածքային փուլում 11-րդ դասարանի աշակերտուհի Տաթեւ Հայրապետյանը՝ անհատական, իսկ դպրոցը՝ թիմային խաղով, գրավել են առաջին պատվավոր հորիզոնականները:

Մեզ հետ ակտիվ համագործակցում են դպրոցի ծնողական եւ կառավարման խորհուրդները: Կառավարման խորհրդի նախագահ Մխիթար Զաքարյանի շնորհիվ այս տարի դպրոցը հրաշալի նվեր ստացավ՝ ժամանակակից չափանիշներին համապատասխան գրադարան: Պղնձամոլիբդենային կոմբինատի արհմիության նախագահ Սամվել Միքայելյանի ջանքերով վերանորոգվեց մեծ մասնաշենքի 2-րդ հարկը:

Հաջողությունների կողքին կան նաեւ մտահոգություններ: Լուրջ խնդիր է ջեռուցման համակարգի բացակայությունը: Բացի դրանից, 400 հոգու համար նախատեսված դպրոցում այսօր սովորում է 600–ից ավելի աշակերտ, որոնց թիվը տարեցտարի ավելանում է, իսկ շենքային պայմանները չեն բավարարում: Հուսով ենք՝ շուտով ավարտին կհասցվի դպրոցի կիսակառույց մասնաշենքի շինարարությունը, եւ հնարավորություն կունենանք ուսուցումը կազմակերպել կաբինետային համակարգով, որն էապես կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

Սիրով ողջունում եւ շնորհավորում եմ բոլորիդ՝ մեր քաղաքի հոբելյանի կապակցությամբ: ■

Շնորհավորանք

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԼԻԴԻԱ ԿԼԻՇԵՎԻՉ

Սոլիգորսկի շրջանային դեպուտատների խորհրդի նախագահ

Բարի՛ օր, քույր քաղաքի հարգելի բնակիչնե՛ր:

Այսօրվա ձեր տոնին մենք ձեզ հետ ենք, չնայած հազարավոր կիլոմետրեր հեռու ենք գտնվում:

Երկու անգամ հնարավորություն եմ ունեցել լինել ինձ համար արդեն հարազատ դարձած Ագարակ քաղաքում, ձեզ հետ զգալ տոնի այն լավ ու գեղեցիկ պահերը, որ այսքան տարի հետո էլ զգում եմ իմ հոգում եւ սրտում:

Շնորհակալությո՛ւն ձեր հյուրընկալության եւ բարյացակամության համար: Մեր՝ սոլիգորսկյան հողի ողջ բնակչության անունից այսօր ջերմ ողջույններ եմ փոխանցում ձեզ, ինչպես նաեւ բարության, խաղաղության, բարեկեցության բարեմաղթանքներ: Ցանկանում եմ, որ յուրաքանչյուրիդ ընտանիքում տիրի լավ տրամադրություն, որ Ագարակում ընտանիքներ կազմվեն, մանուկներ ծնվեն, լույս աշխարհ գան թոռներ, եւ թո՛ղ մեր բարեկամ ազգի՝ հայոց հողը միշտ ապրի միայն խաղաղ երկնքի ներքո: Շնորհավո՛ր ձեր տոնը, թանկագին ագարակցինե՛ր: ■

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԱԼԵՔՍԵՅ ՎԱՍՍԱՎ

Մեղրու սահմանապահ զորքերի հրամանատարի պաշտոնակատար, գնդապետ

Հարգելի՛ Մխիթար Սեյրանովիչ,

Ընդունե՛ք մեր ամենաանկեղծ ու բարի շնորհավորանքներն Ագարակ քաղաքի կազմավորման 65-րդ տարեդարձի առիթով:

Այս տոնը ձեր հիանալի քաղաքը մեծարելու առիթ է, որի բնակիչները պետք է վերցնեն փոքր հայրենիքի ճակատագրի կերտման պատասխանատվության էստաֆետը: Ամբողջ սրտով երախտագիտություն եմ հայտնում Ձեզ՝ պարո՛ն քաղաքապետ, այս տարիների ընթացքում Ձեր կողմից տեղի բնակչության եւ ռուս սահմանապահների միջեւ բարեկամության ամրապնդմանն ուղղված աշխատանքի համար:

Մաղթում եմ Ձեզ մեծ հաջողություններ, նոր գաղափարներ ու ձեռքբերումներ, բոլոր ծրագրերի իրականացում եւ, իհարկե, համախոհների հուսալի թիմ, ձեր քաղաքին՝ կայունություն եւ բարգավաճում, իսկ բոլոր ագարակցիներին ցանկանում եմ երջանկություն, առողջություն, բարեկեցություն, երկարակեցություն, ակտիվություն եւ իմաստնություն:

Թո՛ղ բոլորիդ ընտանիքներում տիրեն ուրախությունը, խաղաղությունն ու փոխըմբռնումը: ■

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ Ռադիկ Մարտիրոսյանին

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան

2015թ. դեկտեմբերի 3-ին լրանում է հայ ականավոր արձակագիր, հրապարակախոս ու ազգային գործիչ Սերո Խանզադյանի ծննդյան 100-ամյակը:

Հոբելյանն ըստ պատշաճի նշելու համար արդեն իսկ ձեռնարկում ենք քայլեր: Խնդրի բարդությունն այն է, որ վերջին քսան տարում նրա գրական ժառանգության տարածումն ու նորովի արժեւորումը գրեթե դուրս են մնացել ուշադրությունից: Բաց թողնվածն ինչ-որ չափով լրացնելու համար տեւական աշխատանք է պահանջվում:

Հոբելյանի նախապատրաստական աշխատանքների գլխավոր ուղղություններից մեկը, կարծում ենք, Սերո Խանզադյանի ստեղծագործական ժառանգության իրատեսական գնահատումն ու արժեւորումն է:

Մենք հնարավորությունների սահմաններում որոշակի աշխատանք ենք կատարում այդ ուղղությամբ: Սակայն մեր ուժերով նման դժվարին ու պատասխանատու խնդրի շատ թե քիչ ամբողջական լուծումը գրեթե անհնար է: Ուստիեւ խնդրում ենք Ձեր աջակցությունը:

Մասնավորապես՝ հայցում ենք Ձեր օգնությունը՝ պատրաստելու (պատվիրելու) գիտական հոդվածներ կամ գրականագիտական ուսումնասիրություններ ստորեւ ներկայացվող թեմաների վերաբերյալ:

1. Սերո Խանզադյանի մանկապատանեկան արձակը:
2. Սերո Խանզադյանի հրապարակախոսությունը:
3. Գրականությունը եւ Սերո Խանզադյանի պատկերացումները:
4. Սերո Խանզադյանը եւ Ղարաբաղյան շարժումը:
5. Հայոց մեծ եղեռնի թեման Սերո Խանզադյանի ստեղծագործություններում:
6. Սերո Խանզադյանը՝ բանահավաք:
7. Հայրենական մեծ պատերազմի թեման՝ Սերո Խանզադյանի ստեղծագործություններում:
8. Սերո Խանզադյանի հասարակական-քաղաքական եւ ազգային գործունեությունը:
9. Հայ ժողովրդի պատմության արտացոլումը Սերո Խանզադյանի ստեղծագործություններում:
10. Ակսել Բակունց-Սերո Խանզադյան. տիպաբանական առնչությունները:
11. Սերո Խանզադյանի բանավիճային հոդվածները:
12. Սերո Խանզադյանի հուշապատումների «Հայրենապատում» շարքը:
13. Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման արտացոլումը Սերո Խանզադյանի ստեղծագործություններում:
14. Սերո Խանզադյանի լեզուն եւ ոճը:
15. Առասպելականն ու միֆականը Սերո Խանզադյանի ստեղծագործություններում:

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան

Դուք, անշուշտ, կարող եք նոր թեմաներ առաջարկել կամ փոփոխություններ կատարել առաջադրված թեմաների մեջ, եթե նպատակահարմար գտնեք:

Այդուհանդերձ շատ ցանկալի ենք համարում այդ աշխատանքներն ավարտին հասցնել մինչեւ 2015թ. ապրիլ-մայիս, որից հետո մենք կձեռնարկենք դրանց հիման վրա գրողի ծննդավայր Գորիսում գիտաժողովի անցկացումը:

Պատրաստված նյութերը կտպագրվեն «Սյունյաց երկիր» թերթի՝ Սերո Խանզադյանի հոբելյանին նվիրված բացառիկ համարում:

Ակնկալում ենք Ձեր աջակցությունը, ինչի համար նախապես մեր երախտագիտություն ենք հայտնում:

Միաժամանակ պատրաստակամություն ենք հայտնում սատարել Ձեր բոլոր նախաձեռնությունները՝ ուղղված Սերո Խանզադյանի գրական ժառանգության ուսումնասիրմանը եւ տարածմանը:

Հարգանքով՝ Սուրեն Խաչատրյան
Սյունիքի մարզպետ
3 դեկտեմբերի 2014թ.

Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին

Մեծարգո՛ պարոն քաղաքապետ

«Սյունյաց երկիր» թերթը պատրաստում է հատուկ համար՝ նվիրված Մովսես Գ Տաթեւացի Ամենայն հայոց կաթողիկոսին (1629-32թթ.)՝ մեր ազգային-եկեղեցական վերջին սրբին:

Համարի նախապատրաստման ընթացքում փորձել ենք ճշտել նրա գերեզմանի տեղը, որը պետք է լինի Երեւանի՝ հայոց վարդապետ Հովհաննես Կոզեռն Տարոնացու անվան գերեզմանատանը: Մեր որոնումները, սակայն, արդյունք չեն տվել առայժմ:

Բարեհիշատակ Անդրանիկ Մարգարյանի օրերից Ձեր ընտանիքը կապված է եղել Սյունիքի հետ, մտահոգվել սյունիքյան խնդիրներով: Ահա ինչու Ձեր օգնությանն ենք դիմում այդ հարցով՝ ակնկալելով պատշաճ վերաբերմունք եւ հետեւողականություն:

Խնդրում ենք հանձնարարել մայրաքաղաքի համապատասխան ծառայություններին՝ Կոզեռնի գերեզմանատանը գտնելու բոլոր ժամանակների ամենանշանավոր սյունեցիներից մեկի՝ Մովսես Գ Տաթեւացու (Խոտանանցու, Սյունեցու, Աճանանցու) գերեզմանը: Եթե նրա գերեզմանի տարածքը նախորդ ժամանակներում, քաղաքաշինական նպատակով, իրացված լինի, իսկ մասունքները տեղափոխված լինեն այլ վայր, ապա կուզենայինք այդ մասին նույնպես իմանալ:

Մի խոսքով՝ Ձեր օգնությունն ենք հայցում՝ համոզված լինելով, որ մեր ազգային ու եկեղեցական նշանավոր այդ գործչի գերեզմանի տեղորոշումը Ձեզ նույնպես կհետաքրքրի. նա դեռեւս կենդանության օրոք էր ստացել «Երկրորդ լուսավորիչ հայոց» հորջորջումը:

Կանխավ շնորհակալություն ենք հայտնում՝ աջակցության համար:

Հարգանքով՝
Սամվել Ալեքսանյան
«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Գ. ՍԱՀԱԿՅԱՆԻ

«Կապանի կանանց ռեսուրս կենտրոնը» հինգ տարեկան է

Քաղաքացիական հասարակություն

«Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» հասարակական կազմակերպությունը նոյեմբերի 29-ին նշեց իր հիմնադրման հնգամյակը: Մարզկենտրոնի քաղաքապետարանի նիստերի դահլիճում կազմակերպված տոնական հանդիսությանը փարբեր ՀԿ-ների, ՁԼՄ-ների, տեղական այլ կառույցների ներկայացուցիչները, կազմակերպության անդամներն ու շահառուները ներկայացված հաշվետվությամբ ծանոթացան ռեսուրս կենտրոնի մինչ այժմ կատարած աշխատանքներին, տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացրած գործունեությանը, գրանցած հաջողություններին:

«ԿԿՌԿ» ՀԿ-ն ստեղծվել եւ այժմ էլ ծրագրեր է իրականացնում հիմնականում ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ, հինգ տարում իրագործել է 17 ծրագիր, ունի 26 անդամ, 7 հոգանոց խորհուրդ: Նրա աշխատանքներում ընդգրկվել է 3850 շահառու, տարբեր ծրագրերում աշխատել է 54 հոգի, իսկ ՀԿ-ի 41 շահառու այստեղ վերապատրաստում անցնելուց հետո ընդունվել է աշխատանքի:

ՀԿ-ի նպատակը հիմնականում կանանց դերի հզորացումն է նրանց հմտությունների եւ կարողությունների զարգացման միջոցով, որն իրականացվում է տարբեր դասընթացների, սեմինարների, քննարկումների, միջոցառումների տեսքով: «ԿԿՌԿ»-ն ակտիվորեն մասնակցում է համայնքում եւ մարզում կազմակերպվող միջոցառումներին, տոներին՝ ցուցահանդես-վաճառքների միջոցով ներկայացնելով նաեւ իր ձեռքի աշխատանքների ակումբի գործերը: Ի դեպ, հենց ՀԿ-ի ծրագրերի շնորհիվ Կապանում վերածնվել են մեր ավանդական կարպետագործությունն ու կավագործությունը, իսկ շահառու կանայք հնարավորություն ունեն իրենց պատրաստած աշխատանքների վաճառքից նաեւ եկամուտ ստանալ: Կենտրոնը զբոսաշրջության զարգացման շրջանակներում 2011-ին լույս է ընծայել «Բացահայտիր Կապանը» աննախադեպ գրքույկ-ուղեցույցը: ՀԿ-ում ստեղծված նվիրատվության արկղը հնարավորություն է տալիս հավաքված իրերով պարբերաբար օգնել Կապանի բազմազավակ մի քանի ընտանիքի:

Կազմակերպությունը միացել է ՀԿ մի շարք ցանցերի, այդ թվում՝ Սյունիքի ռեսուրս կենտրոնների «Վիննետ Հայաստան» ցանցին, որն էլ 2014-ից արդեն անդամակցում է եվրոպական ռեսուրս կենտրոնների «Վիննետ Եվրոպա» ընկերակցությանը: «Կապանի ԿՌԿ» ՀԿ նախագահ Քրիստինա Սաղաթելյանը տեղեկացրեց, որ գալիք տարում, ի թիվս շարունակվող ծրագրերի, կազմակերպությունը ցանկանում է ուշադրություն հրավիրել նաեւ կանանց առողջապահական խնդիրներին:

Միջոցառման մասնակիցները շնորհավորանքի եւ բարեմաղթանքի խոսքեր հղեցին կազմակերպությանը, ինչպես նաեւ քննարկում ծավալվեց, որի ընթացքում ներկաները կարծիք հայտնեցին ՀԿ-ի՝ դերի եւ առաքելության կատարման մասին, փորձեցին ներկայացնել նաեւ իրենց տեսլականը, թե ինչպես եւ ինչ ուղղվածությամբ պիտի աշխատի կազմակերպությունը կանանց զարգացմանը եւ նրանց դերի բարձրացմանը նպաստելու համար: Իսկ մինչ օրս այստեղ տարբեր ծրագրերի շրջանակներում, բազմաբնույթ միջոցառումներից բացի, կազմակերպվել են օտար լեզուների, համակարգչային, ռեզյումե գրելու, կարուձեւի, կավագործության, բիժուտերիայի պատրաստման, կվիլինգի, բատիկայի եւ այլ դասընթացներ:

Տարեդարձը շնորհավորեցին նաեւ «Մեղրու ռեսուրս կենտրոնից» հյուր եկած գործընկերները:

Վերջում «ԿԿՌԿ» ՀԿ նախագահ Ք.Սաղաթելյանը կազմակերպությանը աջակցած մի շարք կազմակերպությունների եւ անձանց շնորհակալագրեր եւ ձեռքի աշխատանքների ակումբի պատրաստած հուշանվերներ հանձնեց:

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Վաղ փարիքի երեխաների սնուցման սկզբունքները

Առողջապահություն

Նոյեմբերի 26-27-ին «Մանուկների եւ վաղ փարիքի երեխաների առողջության ու սնուցման բարելավում» ծրագրի շրջանակներում Կապանում տեղի ունեցավ «Կարեւոր է առաջին 1000 օրը» միջոցառում: Միջոցառման նպատակն էր հղիներին եւ մայրիկներին տեղեկացնել կրծքով կերակրման եւ վաղ փարիքի երեխաների հավելյալ սնուցման սկզբունքների մասին, նպաստել երեխաների ճիշտ սնուցմանը:

Կապանի տարբեր թաղամասերից եւ գյուղական որոշ համայնքներից հրավիրված հղիներն ու մայրիկները տեսաֆիլմով ծանոթացան կյանքի առաջին 1000 օրվա՝ ներարգանդային շրջանից մինչեւ երկու տարեկան երեխաների ճիշտ սնուցման կանոններին: Այդ շրջանում երեխայի աճի եւ զարգացման համար կորցրածը հնարավոր չէ հետագայում վերականգնել անգամ լավագույն սնուցման եւ խնամքի պարագայում: Վաղ մանկության շրջանում երեխաների կերակրման ճիշտ գործելակերպը եւ մինչեւ վեց ամիս բացառապես կրծքով սնուցումը, ժամանակին հավելյալ սնուցման կազմակերպումը, հնարավորինս երկար կրծքով կերակրումը մանկան նորմալ զարգացման, մանկական հիվանդացության եւ մահացածության իջեցման կարեւորագույն նախադրյալներ են:

Մայրիկները պաստառների միջոցով պատկերեցին երեխայի առողջ սնուցման համար անհրաժեշտ միկրոտարրեր պարունակող սննդատեսակները: Հաղթող ճանաչված հինգ մայրիկ արժանացավ մրցանակի:

Մինչ պաստառների արդյունքներն ամփոփելը հարց ու պատասխանի միջոցով ստուգվեցին մայրիկների գիտելիքները երեխայի ճիշտ սնուցման վերաբերյալ: Ճիշտ պատասխանողները ստացան հուշանվերներ:

Նոյեմբերի 27-ին «Վորլդ վիժն Հայաստան» Կապանի տարածքային զարգացման ծրագրի մասնակից հինգ թաղամասի եւ գյուղական համայնքի ակտիվ ծնողների համար անցկացվեց վիկտորինա: Յուրաքանչյուր թաղամասի եւ գյուղական

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 6

Բանկային համակարգ

ԱՐՄԵՆ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ. «Մրցակցային դաշտը մեծացել է, ուստի բանկերը պետք է հնարավորինս շահավետ առաջարկներ ներկայացնեն քաղաքացիներին»

– ՎՏԲ-Հայաստան բանկն ի՞նչ միջոցառումներ է ձեռնարկում՝ հաճախորդների սպասարկման մակարդակը բարելավելու ուղղությամբ:

– Ներկայումս բանկը հաճախորդներին հերթերից զերծ պահելու նպատակով իրականացրել է մի շարք տեխնոլոգիական նորամուծություններ, այն է՝ մասնաճյուղում առկա վճարային տերմինալը, որը հնարավորություն է ընձեռում հաճախորդներին իրականացնել ի հավելումն հաշվի, ավանդի համալրման եւ վարկային պարտավորությունների մարման ու շատ այլ վճարումներ: Մեծ հաջողությամբ ներդրվել է նաեւ «Ինտերնետ բանկ» ծառայությունը, որը ֆունկցիոնալությամբ կարելի է ասել գործող համակարգերի մեջ լավագույններից է, առաջարկում ենք նաեւ քարտային փոխանցումներ բանկոմատի միջոցով թե՛ Հայաստանում գործող քարտերին, թե՛ Հայաստանից դուրս, ունենք նաեւ «Հեռախոս-բանկ» ծառայությունը, տրամադրում ենք էլեկտրոնային վարկային հայտերի լրացման հնարավորություն եւ այլն: Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ հաճախորդներին ընձեռվում է հնարավորություն՝ օգտվելու գրեթե բոլոր բանկային ծառայություններից առանց հերթերի վրա ժամանակ վատնելու: Մեր առաքելությունն այն է, որ ճիշտ մատուցենք մեր հաճախորդներին գործող հնարավորությունները, ինչին, վստահ եմ՝ կհասնենք շատ կարճ ժամանակահատվածում:

– Քանի՞ աշխատատեղ կա «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Մեղրու մասնաճյուղում, եւ անհրաժեշտության դեպքում ինչպե՞ս եք համալրում կադրերը:

– Այս պահի դրությամբ մասնաճյուղում ունենք 12 աշխատող, հաճախորդների առանց ընդմիջման սպասարկումն ապահովելու համար նախատեսել ենք աշխատակից (կես դրույքով), ով ընդմիջման ժամերին փոխարինում է մյուս աշխատակիցներին: Շուտով մեկ հաստիք էլ կունենանք՝ առանձին Telcell վճարային տերմինալի սպասարկման համար:

Ինչ վերաբերում է կադրերին, ապա նման խնդիր չունենք: Մեր բանկում ուսումնական պրակտիկա անցնող ուսանողներին պահանջարկի դեպքում առաջարկում ենք աշխատանք՝ իհարկե հաշվի առնելով նրանց ընդունակությունները:

– Կարո՞ղ եք նշել Մեղրիում ստացվող տրանսֆերտների չափը, դինամիկան:

– Մեղրու տարածաշրջանում մարդիկ մեծ մասամբ ապահովված են աշխատանքով, եւ տրանսֆերտների կարիք շատ չի զգացվում: Հետեւաբար տրանսֆերտների չափը մեծ չէ, եւ առանձնակի տատանումներ չեն նկատվում:

– Որո՞նք են ձեր բանկի հիմնական վարկատեսակները:

– Տրամադրում ենք սպառողական, հիփոթեքային, գյուղատնտեսական, բիզնես վարկեր, ավտովարկեր, իրականացնում ենք ոսկու գրավով վարկավորում: Առաջարկվող վարկերի վերաբերյալ տեղեկատվություն քաղաքացիները կարող են ստանալ բանկի պաշտոնական կայքից, մասնաճյուղերում տեղադրված բուկլետներից ու պաստառներից:

– Գերակշռո՞ւմ են արդյոք գյուղատնտեսական վարկերը:

– Մենք տրամադրում ենք գյուղատնտեսական վարկեր, սակայն դրանք գերակշիռ մաս չեն կազմում, քանի որ Մեղրիում գյուղատնտեսության ոչ բոլոր ճյուղերն են զարգացած, իսկ տրամադրվող վարկը պետք է անպայման օգտագործման նպատակայնություն ապահովի:

– Վարկերի տեսակներից որո՞նք են Մեղրու տարածաշրջանում գերակշռում:

– ՎՏԲ-Հայաստան բանկն ակտիվ քաղաքականություն է վարում (որը առաջիկայում շարունակելու է գերակա մնալ) աշխատավարձային նախագծերի շրջանակներում տրամադրվող վարկերի մասով, այսինքն՝ մենք պայմանագրեր ենք կնքում Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի, դպրոցների, զորամասերի, բժշկական կենտրոնների, խոշոր, միջին եւ մանր բիզնեսով զբաղվող կազմակերպությունների հետ եւ նրանց աշխատակիցներին հնարավորություն ենք տալիս ցածր տոկոսադրույքով եւ առավել հարմար պայմաններով վարկ ստանալ:

– Նշեք ձեր բանկում ամենացածր տոկոսադրույքով տրամադրվող վարկերը:

– Ես արդեն նշեցի աշխատավարձային նախագծերի շրջանակներում տրամադրվող վարկերը: Երիտասարդ ընտանիքներին տրամադրում ենք հիփոթեքային վարկեր, որոնք պետության համաֆինանսավորմամբ են տրվում, իսկ այն հաճախորդների համար, ովքեր ներգրավված են մեր աշխատավարձային նախագծերում, վերոնշյալ վարկը ձեւակերպելիս մեկ տոկոսի չափով զեղչ ենք անում, այսինքն՝ Մեղրիում երիտասարդ ընտանիքը կարող է բնակարան ձեռք բերել 5 տոկոսով: Մանրամասն տեղեկություններ ստանալու համար քաղաքացիները կարող են այցելել մասնաճյուղ, ստանալ խորհրդատվություն, ինչպես նաեւ նորություններին ծանոթանալ բանկի պաշտոնական կայքից:

– Ունե՞ք արդյոք ժամկետանց վարկեր եւ ի՞նչ եք ձեռնարկում այդ ուղղությամբ:

– Յուրաքանչյուր բիզնես ունի իր ռիսկերը: Մեր մասնաճյուղում բարեբախտաբար ժամկետանց վարկերը շատ քիչ են: Հավանաբար պատճառներից մեկն էլ այն է, որ, ինչպես վերը նշեցի, այստեղ մարդիկ աշխատանքով ապահովված են: Եթե նման իրավիճակներ ստեղծվում են, ապա դրանք մարելու համար ամեն հնարավորություն տալիս ենք մեր հաճախորդին:

– Մեղրիում եւ Ագարակում գործող խոշոր ձեռնարկությունները ո՞ր բանկի ծառայություններից են օգտվում:

– Գովազդ չլինի, բայց այս պահին Մեղրիում եւ Ագարակում գործող խոշոր ձեռնարկություններն օգտվում են մեր բանկի ծառայություններից, ինչը թերեւս, պայմանավորված է մեր բանկի՝ տարիների արդյունավետ գործունեությամբ:

– Անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր տրամադրելիս ինչպե՞ս եք գնահատում անշարժ գույքը:

– Բանկերը պայմանագրեր են կնքում անշարժ գույքի գնահատմամբ զբաղվող համապատասխան մասնագիտացված ընկերությունների հետ: Մենք նույնիսկ չենք ուղղորդում հաճախորդներին, պարզապես տրամադրում ենք այն կազմակերպությունների ցանկը, որոնք զբաղվում են նմանատիպ հարցերով: Անշարժ գույքը գնահատելուց հետո կազմակերպությունը փաստաթղթերն ուղարկում է բանկի համապատասխան բաժին, որի եզրակացության հիման վրա տրամադրում ենք վարկը:

– Ինչպե՞ս եք ապահովում վարկերի օգտագործման նպատակայնությունը:

– Նպատակային վարկեր տրամադրելուց հետո պարբերաբար մոնիթորինգ ենք անցկացնում՝ ստուգելու վարկերի նպատակայնության ապահովումը: Պետք է նշեմ, որ մեր տարածաշրջանում տրամադրվող վարկերը հիմնականում ծառայում են իրենց նպատակին:

– Միջազգային շուկայում արտարժույթի տատանումներն արդյո՞ք մեր տնտեսության վրա չեն ունենա բացասական ազդեցություն:

– Կարծում եմ՝ հայաստանյան շուկայի վրա ազդեցությունը շատ մեծ չի լինի:

– Ի՞նչ նոր առաջարկներ ունի բանկը քաղաքացիների համար:

– ՎՏԲ-Հայաստան բանկն անընդհատ թարմացնում է իր առաջարկները, վերանայում վարկերի տոկոսադրույքները, ավանդների տրամադրման կարգը եւ այլն: Բանկային համակարգում մրցակցային դաշտը մեծացել է, ուստի բանկերը պիտի հնարավորինս շահավետ առաջարկներ ներկայացնեն քաղաքացիներին:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Ա. ԱՎԱԳՅԱՆԻ

ԱՅՏԵՂԵԱՐՏ

Արմեն Բունիաթյանը ծնվել է 1968թ. Ագարակ քաղաքում, ուսուցչի ընտանիքում: 1985թ. գերազանցությամբ ավարտել է Ագարակի միջնակարգ դպրոցը, այնուհետեւ ընդունվել Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեքենաշինական ֆակուլտետի արդյունաբերության եւ էկոնոմիկայի կազմակերպում բաժինը, որտեղ մեկ տարի սովորելուց հետո զորակոչվել է խորհրդային բանակ: Ուսումն ավարտելուց հետո վերադարձել է Մեղրի, նախ՝ աշխատանքի ընդունվել Մեղրու զբաղվածության կենտրոնում՝ որպես իրավական տեսուչ, այնուհետեւ չորս տարի աշխատել է «Արդշինինվեստբանկի» Մեղրու մասնաճյուղում վարկային բաժնի պետ: 1997-2002թթ. աշխատել է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ տնօրենի օգնական, այնուհետեւ՝ տնօրենի տեղակալ: 2002թ. հունվարից Մեղրիում «Հայխնայբանկի», որ հետագայում վերանվանվեց «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ, Մեղրու մասնաճյուղի կառավարիչն է:

Կրթության գերազանցության ազգային ծրագիրը

Քննարկում

Նոյեմբերի 27-ին Կապանում տեղի ունեցավ «Կրթության գերազանցության ազգային ծրագիր» նախագծի հանրային քննարկում՝ Սյունիքի մարզի կրթության եւ մշակույթի ոլորտի ներկայացուցիչների, տարբեր ՀԿ-ների մասնակցությամբ:

ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը եւ «Այբ» կրթական հիմնադրամը, համագործակցելով Քեմբրիջի համալսարանի եւ Լոնդոնի կրթության ինստիտուտի հետ, նախաձեռնել են Կրթության գերազանցության ազգային ծրագիրը, որի նպատակն է կարեւորել ուսուցչի դերը հասարակության մեջ, գրավիչ դարձնել կրթության սպասավորի մասնագիտությունը, լավագույն մասնագետներին ուղղորդել դեպի կրթություն եւ ձեւավորել մրցունակ, առաքելությամբ դպրոց մտնող ուսուցիչների համայնք:

Ծրագրով նախատեսվում է ՀՀ դպրոցներում ներդնել միջազգային չափանիշներին համապատասխան հայալեզու կրթական ծրագիր՝ «Արարատյան բակալավրիատ» (ԱԲ), եւ պատրաստել այդ ծրագրին համապատասխան որակավորման ուսուցիչներ:

2014-16թթ. ծրագիրը կհամալրվի ու կներկայացվի միջազգային հավաստագրման, 2016-19թթ. 12 ավագ դպրոց ՀՀ-ում եւ մեկ ավագ դպրոց ԼՂՀ-ում ամբողջովին կանցնեն «Արարատյան բակալավրիատ»-ի: Այդ դպրոցները նաեւ կդառնան ուսուցիչների վերապատրաստման միջազգային կենտրոններ: 2019-23թթ. կներդրվի ՀՀ եւ ԼՂՀ բոլոր ավագ դպրոցներում, որակավորում կստանա մոտ 2000 ԱԲ ուսուցիչ եւ մոտ 20000 ուսուցիչ կհայտնվի ծրագրի ազդեցության շրջանակում:

Ծրագրի շրջանակներում կստեղծվի ռեսուրսների հարուստ կենտրոն, որը կաջակցի Հայաստանի ողջ ուսուցչական համայնքին՝ կատարելագործելու դասավանդման մեթոդիկան եւ հմտությունները, կօգնի՝ ներդաշնակելու ազգային եւ միջազգային կրթական չափորոշիչները եւ տեղայնացնելու համաշխարհային լավագույն փորձը Հայաստանում:

«Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մեսրոպ քահանա Արամյանը խոսեց մեր երկրում ուսուցչի դերի բարձրացման անհրաժեշտության մասին, մանրամասն ներկայացրեց հիմնադրամի գործունեությունը, հետագա անելիքները՝ մասնավորապես նշելով. **«Սա ազգային ծրագիր է, որ կիրականացվի բացառապես պետական բյուջեով: Այն լիարժեք չի լինի, եթե մենք՝ բոլորս, տեր չկանգնենք դրան»:**

Նա նշեց, որ, ուսումնասիրելով աշխարհի լավագույն կրթական հաստատությունների փորձը, մշակել են ծրագրի կետերը, որոնք առանց մշակույթի եւ կրթության ոլորտի համապատասխան մասնագետների հետ քննարկումների հնարավոր չէ հաստատել: **«Մենք չենք պատճառահանելու միջազգային կրթական ծրագրերը, այլ ստեղծելով սեփականը՝ դրանք համապատասխանեցնելու ենք ազգային արժեհամակարգին»,** - նշեց տեր Մեսրոպ քահանա Արամյանը:

Ներկայումս աշխատում են միայն ավագ դպրոցների ուղղությամբ, բայց նախատեսվում է նաեւ տարրական եւ միջին դպրոցների համար ունենալ նմանատիպ ծրագրեր:

Ներկաները ծրագրին վերաբերող հարցեր ուղղեցին՝ մտավախություն հայտնելով դրա՝ մեր հասարակությանն անհամապատասխան լինելու վերաբերյալ: Ներկաներն ինչ-որ տեղ ուտոպիական համարեցին ծրագիրը:

Ծրագիրը ներկայացնելուց հետո անցկացվեց քննարկում որակյալ կրթության չափանիշների եւ դրանք իրագործելու խոչընդոտների, որակյալ ուսուցչի կատարելատիպի, կրթության գերազանցության ազգային ծրագրի իրագործման խոչընդոտների վերաբերյալ:

Հանրային լսումները կշարունակվեն Հայաստանի բոլոր մարզերում եւ ԼՂՀ-ում ու կտեւեն մի քանի ամիս, որից հետո միայն ծրագիրը կլրամշակվի եւ կներկայացվի վերջնական հաստատման:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գերխնդիրը՝ ուսման որակի բարձրացում

Ճանաչողական հանդիպում

Նոյեմբերի 17-ին Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի պաշտոնակատար է նշանակվել Հովիկ Ալեքսանյանը: Վերջինս նոյեմբերի 26-ին Կապանի տարածաշրջանի դպրոցների տնօրենների եւ փոխտնօրենների մասնակցությամբ խորհրդակցություն էր հրավիրել:

Վարչության պետի պաշտոնակատարը նախընտրեց չխոսել իր կյանքի եւ գործունեության մասին, այլ միանգամից անցավ գործի: Նա տնօրեններին խնդրեց ներկայացնել իրենց դպրոցի մեկ առաջնային խնդիր՝ խոստանալով դրանք առաջիկա մարզխորհրդի նիստում քննարկել եւ հնարավորության սահմաններում այդ հարցերին լուծում տալ:

Տնօրենները որպես առաջնային խնդիրներ նշեցին տանիքի, մարզադահլիճի եւ դահլիճի նորոգում, ջեռուցման ապահովում, համակարգչային սենյակների թարմացում, որոշ առարկաներից ուսուցչի թափուր տեղի համալրում եւ այլն: Ցավալի էր այն, որ փակման վտանգի առաջ հայտնված որոշ դպրոցների տնօրեններ նշեցին, որ ոչ մի խնդիր չունեն, այնինչ ամենամեծ խնդիրն իրենց դպրոցներում է՝ աշակերտների թիվը: Ներկաներից ոմանք էլ փոքր դպրոցի խնդիրներին կեսկատակ-կեսլուրջ էին վերաբերվում:

Խնդիրներին ծանոթանալուց հետո վարչության պետի պաշտոնակատարը նշեց, որ դպրոցի փոխտնօրեններին հրավիրելն ինքնանպատակ չէ. տարիներ շարունակ որոշ տնօրեններ խորհրդակցությունում քննարկված հարցերը չեն ներկայացրել ուսուցիչներին, եւ, բնական է, որ այդ դեպքում դպրոցի կրթական համակարգն ինչ-որ առումով թերի է եղել: Ուստի նրա առաջնային նպատակն է լինելու կրթության որակի բարձրացումը, որ հնարավոր է միայն դպրոցի բոլոր օղակների համատեղ ու նվիրված աշխատանքի շնորհիվ:

«Մեր խնդիրը լինելու է ոչ թե վերահսկել ուսուցչին կամ տնօրենին, այլ նպաստել նրանց արդյունավետ գործունեությանը, ուսման որակի բարձրացմանը», – նշեց Հովիկ Ալեքսանյանը:

Կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության աշխատակիցները պարբերաբար կայցելեն դպրոցներ՝ ծանոթանալու դասապրոցեսին, աշակերտների գիտելիքներին, դպրոցի խնդիրներին: **«Նյութական բոլոր խնդիրներն էլ ժամանակի ընթացքում լուծվելու են. կարեւորը հոգեւոր արժեքների սերմանումն ու արդյունավետ դասապրոցեսի կազմակերպումն է»,** – նշեց վարչության պետի պաշտոնակատարը:

Սյունիքի մարզպետարանի կրթության բաժնի պետ Հայկ Հարությունյանը տնօրեններին եւս մեկ անգամ հիշեցրեց ուսուցիչների ատեստավորման, «Հայաստան» համահայկական հիմնադրամի նվիրատվության, «Հնդկաստանն իմ աչքերով» շարադրությունների եւ նկարների մրցույթի մասին:

«Dasaran.am» կրթական ծրագրի պահանջները բոլոր դպրոցները պետք է կատարեն ճիշտ ժամանակին, չնայած այն հանգամանքին, որ որոշ դպրոցների տնօրեններ դժգոհեցին ԿՏԱԿ-ի տրամադրած ինտերնետ կապի որակից:

Վերջում վարչության պետի պաշտոնակատարը, նշելով, որ արդեն մեկնարկել է 2014-15 ուստարվա հանրապետական առարկայական օլիմպիադան, ներկաներին հորդորեց ապահովել արդար ու անկողմնակալ ընտրություն, որ հանրապետական փուլում մարզն արձանագրի էական հաջողություններ:

Սյունիքի մարզպետի խորհրդական Վոլոդյա Հովհաննիսյանը մատաղ սերնդի դաստիարակության, կրթության կազմակերպման գործում ներդրած ավանդի համար Կապանի N6 հիմնական դպրոցի տնօրեն Մարինե Դավթյանին հանձնեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի շնորհակալագիր՝ հիմք ընդունելով «Պատանի երկրապահ» ակումբի ստեղծման հանդիսավոր միջոցառումը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Աշխատանքային փոնավաճառ

Զբաղվածություն

Հանրապետությունում գործազրկության մակարդակը շարունակում է բարձր մնալ, եւ սոցիալական այդ չարիքի դեմ պայքարելու կառավարության որդեգրած ծրագրերից մեկն աշխատաշուկայի կազմակերպումն է, որն արդեն ավանդական է դառնում: Նոյեմբերի 29-ին Կապանի «Լեռնագործ» հյուրանոցում անցկացվեց հերթական աշխատանքային փոնավաճառը, որը կազմակերպել էր ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Կապանի զբաղվածության տարածքային կենտրոնը:

Մի հարկի տակ հավաքված 28 գործատու առաջարկում էր մոտ 120 աշխատատեղ: Ընդ որում՝ ամենից շատ աշխատատեղ առաջարկում էին «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲ եւ «Գոլդ սթար» ՍՊ ընկերությունները:

Ինչպես փոխանցեց «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲ ընկերության մարդկային ռեսուրսների աշխղեկ Մարիաննա Հովհաննիսյանը, մինչ այդ ընկերությունը Կապանում անցկացրել էր երկու աշխատանքային տոնավաճառ, որոնց ժամանակ լրացվել էր ձեռնարկության թափուր հաստիքների հիմնական մասը, այժմ իրենք առաջարկում են թափուր հաստիքներ ստորգետնյա հանքում, ինչպես նաեւ լրացուցիչ հաստիքներ՝ վերապատրաստող ավտոէլեկտրիկ, ավտոէլեկտրիկ, բուժքույր, բայց հիմնական թափուր հաստիքներն առնչվում են ստորգետնյա հանքին: Ինչպես տեղեկացրեց «Գոլդ սթարի» ներկայացուցիչ Մարիետա Սիմոնյանը, իրենց ձեռնարկությունը հավաքագրում է երիտասարդ աշխատակիցներ՝ 15-20 հոգի, պահանջվում են տեղամասի հերթափոխի պետ, կշռող-փականագործ, ամբարձիչի մեքենավար եւ այլն:

Ծանոթացանք նաեւ մյուս տաղավարների առաջարկվող մասնագիտություններին: «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերությունը երկու թափուր տեղ էր առաջարկում՝ բժիշկ-թմրաբան եւ դեղագործ, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը՝ երկու վիրահատող մանկաբարձ, գինեկոլոգ, մեկական՝ անեստեզիոլոգ, նեոնատոլոգ, ուրոլոգ, ֆտիզիատոր, լաբորատորբժիշկ (հիստոլոգ), էնդոկրինոլոգ, հեմոդիալիզի բժիշկ, պաթանատոմ: «Կապան էնեղժի» ՓԲ ընկերությունը կարիք ունի չորս հերթապահ ճարտարագետ-էլեկտրիկի, «Կապանի կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ում թափուր են երկու բակային հավաքարարի, փականագործ-սանտեխնիկի եւ աղբահավաք բանվորի հաստիքները:

Աշխատանք փնտրողների մեծ մասը երիտասարդ տարիքի էր: Նարինե Արզումանյանը 2009թ. ավարտել է Արցախի պետական համալսարանը, մասնագիտությամբ բանասեր է: Որոշ ժամանակ աշխատանք է ունեցել, այժմ անգործ է, նախընտրում է մանկավարժի մասնագիտությունը, բայց դեմ չէր լինի, եթե գործավարի աշխատանք գտներ: Վարդան Ստեփանյանը որդու համար էր աշխատանք փնտրում, անցյալ տարի է բանակից զորացրվել, հեռակայում է Երեւանի գյուղատնտեսական համալսարանի Կապանի ուսումնական կետում, ցանկանում է ուսումը զուգակցել աշխատանքի հետ: Վարդանը վերցրել էր «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲ ընկերությունում առկա թափուր հաստիքների ցանկը՝ տանը հանգամանորեն ծանոթանալու նպատակով:

Աշխատանքի տոնավաճառին մասնակցում էին Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության սոցիալական ծառայություն» գործակալության պետ Արտակ Մանգասարյանը, Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը: Բացելով միջոցառումը՝ Կապանի զբաղվածության կենտրոնի տնօրեն Արթուր Հակոբյանը նշեց, որ անցկացվող աշխատանքի տոնավաճառը զբաղվածության ամենամյա պետական ծրագրերից է, որ աշխատանք փնտրողներին հնարավորություն է ընձեռում գտնելու հարմար աշխատանք, իսկ գործատուներին՝ համալրել իրենց թափուր աշխատատեղը համապատասխան կրթություն ու որակավորում ունեցող մասնագետով: Ինչի վերջնական արդյունքն ըստ կենտրոնի տնօրենի՝ Կապանի տարածաշրջանում գործազրկության մակարդակի նվազեցումն է:

Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը վկայակոչեց աստվածաշնչյան ճշմարտությունները՝ ով փնտրում է, կգտնի, ով բախում է, Աստված նրա առջեւ դուռը կբացի: **«Վստահաբար ասում եմ, եթե մեկին թեկուզ կարողանաք ապահովել աշխատատեղով, կարծում եմ՝ մեծ գործ արած կլինեք: Բայց եւ միանշանակ է, որ գործատուի եւ աշխատանք փնտրողի միջեւ պիտի ձեւավորվի փոխադարձ հարգանք, հարգանք իրենց աշխատանքի նկատմամբ»:**

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը կազմակերպվող միջոցառման հաջողությունը համարեց այն, որ գործատուն եւ աշխատանք փնտրողը կարողանան մի հայտարարի գալ եւ համոզմունք հայտնեց, որ նման միջոցառումները՝ միտված գործազրկության սահմանների կրճատմանը, Կապանում հաճախակի կկազմակերպվեն:

«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետ Արտակ Մանգասարյանն իր խոսքում ընդգծեց այն միտքը, որ աշխատանք փնտրողին երբեմն դժվար է լինում գնալ որեւէ ձեռնարկություն կամ ընկերություն, գտնել կադրերի պատասխանատուին, պարզաբանումներ ստանալ, իսկ աշխատանքի տոնավաճառը մի հարթակ է, որտեղ իրար են հանդիպում աշխատանք փնտրողը եւ գործատուն, ինչը հնարավորություն է տալիս գործ փնտրողին մանրամասն տեղեկություններ ստանալ իրենց նախընտրած աշխատանքի վերաբերյալ: Ա.Մանգասարյանը ներկաներին հորդորեց մոտենալ Կապանի զբաղվածության կենտրոնի տաղավարին, ծանոթանալ զբաղվածության կարգավորման ամենամյա պետական մյուս ծրագրերին, բանզի պետությունը եւս գործատուների համար առաջարկում է արտոնյալ եւ շահագրգիռ պայմաններ: Նաեւ հայտնեց, որ աշխատանքի տոնավաճառը զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագրերից է, որն իրականացվում է պետբյուջեի ֆինանսավորմամբ, եւ Կապանում անցկացվողն այս տարվա 11-րդ տոնավաճառն է:

Միջոցառման ավարտին Կապանի զբաղվածության կենտրոնը շնորհակալագրեր հանձնեց համագործակցության մի խումբ գործատուների:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Գեղանուշի պոչամբարի ազդակիր համայնքում՝ 144 հիվանդ, որից երեքը՝ անբուժելի

Բնապահպանություն

ՀՀ Սյունիքի մարզում գտնվող Գեղանուշի պոչամբարն ամեն տարի գրավում է 10 հա նոր տարածք: Հիմնականում դրանք Գեղանուշ համայնքի վարչական տարածքներն են: Ըստ գեղանուշցիների՝ գյուղապետարանի եւ պոչամբարը շահագործող «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ի միջեւ պետք է կնքվի նոր պայմանագիր՝ պոչամբարի տարածքը մեծացնելու համար:

Գեղանուշի պոչմբար տարեկան լցվում են ընդհանուր քանակությամբ /պինդ/ 568624.0 տոննա պոչեր, եւ բնակիչների խոսքով՝ պոչամբարի տարածքն ուղղահայաց դեռ 15 մետր պետք է բարձրանա:

Մինչ 2011թ. «Ընդերքի մասին» ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը Գեղանուշի պոչամբարը համարվում էր առաջին դասի վտանգավորության պոչամբար: Սակայն այս օրենսգրքով պոչամբարները դիտարկվում են ոչ թե որպես վտանգավոր թափոններ, այլ որպես տեխնածին հանքավայրեր, եւ ոչ ոք պարտավոր չէ փոխհատուցել բնակիչներին այն վնասը, որ նրանք կրում են՝ գտնվելով պոչամբարի ազդեցության տակ:

«Մեր համայնքում 10 հոգուց 8-9-ը հիվանդ են... Մեր միսը, կարտոֆիլը, կանաչին չեն առնում շուկայում...Մենք սկզբից էլ դեմ ենք եղել այս պոչամբարի վերակառուցմանը... ամիսներով ծանր տեխնիկան կանգնեցրել ենք, բայց ինչ օգուտ...», – բողոքում էին գեղանուշցիները:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

Պատշաճ փոխհատուցման բացակայության պայմաններում նրանց սփոփում է միայն ընկերության բարի կամքի դրսեւորումը: «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ն տարեկան 3 միլիոն դրամ փոխանցում է 21 հա հողի վարձակալության համար: Բացի դրանից, վերջին երեք տարիներին ընկերությունը 10 միլիոն դրամի ծրագրեր է իրականացնում գյուղում:

«Անցյալ տարի մեր ակումբի շենքի տանիքը փոխել է: Այս տարի էլ ներսը ամբողջությամբ վերանորոգել է: Գյուղի դպրոցի համար բեմ է կառուցել՝ մոտ 1 միլիոն 200 հազար դրամի: Նախանցած տարի էլ 10 միլիոն տվել է գյուղի ճանապարհը վերանորոգելու համար», – էկոԼուրին ասացին Գեղանուշի գյուղապետարանում:

Սակայն այս ծրագրերի մասին Գեղանուշում տարաձայնություններ կան:

«Որ իրա ամբողջ եկամուտն էլ տա գյուղին, մեզ ինչ, եթե մենք հիվանդ ենք», – ասում էին բնակիչները:

Ի տարբերություն բնակիչների՝ Գեղանուշի համայնքապետ Իվան Կոստանդյանը այդքան էլ լավ չէր պատկերացնում պոչամբարի ռիսկերը եւ վնասները:

«Խոսակցությունները, որ պոչամբարը թունավոր է եւ թույն է արտադրում, տպավորվում է մարդու ուղեղի մեջ... Նման տարածայնություններից գեղանուշցու մթերքը չեն առնում... Ինչո՞վ է թունավորված Գեղանուշի տարածքը, ո՞վ է ապացուցել, ապացուցեք՝ ի՞նչ վնաս է տալիս պոչամբարը մեր ժողովրդին... լրագրողները ավելի շատ վնաս են տալիս, քան պոչամբարը, – ասաց Իվան Կոստանդյանը, **– ես գրություն ուղարկեցի Կապանի բուժհամալիրի գլխավոր տնօրենին, պահանջեցի հիվանդների քանակը: Անցյալ տարվա դրությամբ 144 այցելու է եղել մեր գյուղից տարբեր հիվանդություններով, որոնցից երեքը անբուժելի»:**

Նշենք, որ պաշտոնական տվյալներով Գեղանուշն ունի 356 բնակիչ:

«Եթե կառավարություն լինի, մենք իմանանք՝ կառավարությունը մեր գյուղապետարանին մի բան տրամադրելու է, դրոշակով կգնանք, կպայքարենք, բայց որ գիտենք կառավարություն չկա, ով ինչ տալիս է՝ ասում ենք լավ է... հիմա մենք ջուր չունենք խմելու, էտ մարդը պիտի մի հարյուր մետր խողովակ տա, որ ջուր բերենք, դրա համար էլ ձեն չենք հանում», – ասացին գյուղի բնակիչները:

էկոԼուր, 25 նոյեմբերի 2014թ.

Վեցը՝ առաջին մրցանակով

Մարզական

Կապանի քիք-բոքսինգի «Գարեգին Նժդեհ» ակումբի մարզիկներն անցնող տարում անցկացված մրցաշարերում շարունակում են հաստատել իրենց բարձր կարգը: Նոյեմբերի 15-16-ը Երեւանի «Դինամո» մարզադահլիճում անցկացվեց «Արսենալ» պրոֆեսիոնալ մարզական ասոցիացիայի հինգերորդ հուշամրցաշարը՝ նվիրված Դավիթ Պետրոսյանին:

Կապանի քիք-բոքսինգի ակումբը հուշամրցաշարին ներկայացավ տասը մարզիկով: ՀՀ վաստակավոր մարզիչ, ակումբի մարզիչ Արա Սարգսյանի սաներից վեցը կանգնեցին պատվո պատվանդանի առաջին հարթակին, մեկն արժանացավ արծաթե, եւս երեք հոգի՝ բրոնզե մեդալի: Ինչպես միշտ, կայուն մրցելույթներով աչքի ընկան Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղի ուսանող Շանթ Դավթյանը (54կգ քաշային կարգ), Վլադիմիր Հովհաննիսյանը (մինչեւ 64կգ քաշային կարգ), իսկ Եվրոպական տարածաշրջանային քոլեջի Կապանի մասնաճյուղի ուսանող Արտուշ Ավետիսյանը (մինչեւ 42կգ քաշային կարգ) մրցույթի առաջին ռաունդում լուրջ վնասվածք ստացավ, բայց հաղթահարելով ցավը եւ շարունակելով մենամարտը՝ հակառակորդին նոկաուտի ենթարկեց: Այդ մրցաշարին մասնակցությունն իրականություն դարձավ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի հովանավորության շնորհիվ, ում էլ «Արսենալ» պրոֆեսիոնալ մարզական ասոցիացիան պատվոգիր հանձնեց՝ ակումբին աջակցելու համար: Ի դեպ, «Գարեգին Նժդեհ» քիք-բոքսինգի ակումբի նախագահ է ընտրվել գործարար Սարմեն Սարգսյանը:

Այժմ ակումբի սաներին լուրջ փորձություն է սպասվում: Նրանք նախապատրաստվում են մասնակցելու դեկտեմբերի 13-17-ը Թբիլիսիում կայանալիք Եվրասիայի գավաթի խաղարկությանը:

Նոյեմբերի 24-ին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանն ընդունեց քիք-բոքսինգի «Գարեգին Նժդեհ» ակումբի մարզիչ Արա Սարգսյանին, մրցանակակիր մարզիկներին, շնորհավորեց հաղթանակի առթիվ, հետաքրքվեց նրանց մարզումային պայմաններով եւ նոր հաջողություններ մաղթեց:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Վաղ տարիքի երեխաների սնուցման սկզբունքները

Առողջապահություն

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

համայնքի ծնողներից կազմված թիմերը պատասխանեցին ծրագրին առնչվող տարբեր հարցերի, ինչի արդյունքում հաղթող ճանաչված «Լեռնագործ» թիմը Երեւանում կմասնակցի վերոնշյալ թեմաներով անցկացվելիք երկօրյա սեմինարի:

Կապանի բժշկական կենտրոնի պոլիկլինիկայի մանկական բաժնի վարիչ Զարինե Բաբայանը տեղեկացրեց, որ արդեն երկու տարի է՝ Կապանի պոլիկլինիկայի մանկական բաժնում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի եւ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ «Մանուկների եւ վաղ տարիքի երեխաների թերսնուցման նվազեցում» ծրագրի շրջանակներում գործում է ծնողական կրթության կենտրոն, որտեղ հաճախելով՝ այցելուները հնարավորություն ունեն հղիների, կրծքով կերակրող մայրերի, 0-2 տարեկան երեխաների ճիշտ սնուցման, խնամքի մասին տեղեկություններ ստանալ ընտանեկան բժիշկներից ու մանկաբույժներից: **«Կյանքի առաջին երկու տարին կարեւոր է երեխայի ֆիզիկական եւ հոգեւոր առողջության համար»,** – եզրափակեց իր խոսքը բաժնի վարիչը:

Նմանատիպ միջոցառումներ են կազմակերպվել եւ դեռ կկազմակերպվեն Հայաստանի տարբեր մարզերում: Դրանց զուգահեռ մարզերում անց են կացվում դասընթացներ բուժաշխատողների համար, ինչպես նաեւ վարժանքներ վաղ տարիքի երեխաներ ունեցող ծնողների համար՝ երեխաների սնուցման եւ խնամքի թեմաներով:

Հաճելի երաժշտական կատարումներով ներկաների ուրախ ժամանցն ապահովեցին Կապանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները եւ «Սիլուետ» պարային համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Գայանե Վարդիկյան):

Միջոցառմանը հրավիրված պաշտոնական անձինք ու առողջապահության ոլորտի աշխատակիցներն ընդգրկվել էին Ժյուրիի կազմում:

«Մանուկների եւ վաղ տարիքի երեխաների առողջության ու սնուցման բարելավում» ծրագիրը ֆինանսավորում է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID) եւ իրականացվում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի եւ «Վորլդ վիժն Հայաստան» կազմակերպության հետ համատեղ: Այն մեկնարկել է 2014թ. փետրվարին եւ կիրականացվի մինչեւ 2016թ. հունիս:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավաքվել էին բանաստեղծի երկրպագուները

Մշակույթ

Վաղուց Գորիսի Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի դահլիճն այդքան մարդաշատ չէր եղել: Հավաքվել էին մեծանուն բանաստեղծ Համո Սահյանի պոեզիայի երկրպագուները: Ցերեկույթը կազմակերպել էին մշակույթի կենտրոնի տնօրենությունը, գրադարանային բաժինն ու բաժնին կից գործող գրական խմբակը, որի անդամներն ուսանողներ, բարձր դասարանցիներ են:

Ավագ սերունդը, ինչպես դարեր շարունակ, այնպես էլ այսօր, դժգոհ է երիտասարդությունից: Չգիտեմ երբ, ինչպես, բայց ներկայիս դժգոհությունն արտահայտվում է նախ նրանով, որ իբր երիտասարդությունը կապված չէ գիր-գրականության հետ, որ համացանցը կտրել է նրանց գրքից, որ նրանք գեղարվեստական գրականություն, հատկապես պոեզիա չեն կարդում. դահլիճում հավաքված մոտ երկու հարյուր երիտասարդ՝ բանաստեղծության իրենց նուրբ զգացողությամբ, եկել էին հերքելու այդ կարծրատիպը:

Ասում են՝ բանաստեղծությունը լավն է, իսկ նրա հեղինակը՝ կայացած, եթե այն կարդալիս կամ լսելիս մտածում ես՝ երանի թե ես գրած լինեի: Հասկանալի է, որ Վարպետի բոլոր ստեղծագործություններն էլ այս չափագրության մեջ են: Իսկ երբ դրանք ներկայացվում են նրա խոսքերով գրված՝ մի այլ մեծանուն հայորդու՝ Տիգրան Մանսուրյանի ստեղծած երաժշտության ֆոնի վրա՝ նման շնորհալի երիտասարդների մատուցմամբ՝ ամեն ինչ կատարյալ է դառնում: Վարպետի բանաստեղծությունները հրաշալի ներկայացրին բոլոր ասմունքողները, բայց նրանց մեջ ցանկանում եմ առանձնացնել հատկապես Գորիսի Ս.Խանզադյանի անվան դպրոցի 4-րդ դասարանցի Ինգա Գյուլամբարյանին, ում մանկական անկեղծությունն ու բանաստեղծի խոսքի, պատկերի պարզությունը գտել էին իրար, դարձել մի ամբողջություն:

Ցերեկույթի ավարտից հետո մասնակիցները չէին շտապում թողնել դահլիճը: Հրավիրվածներից շատերն իրենց պարտքն էին համարում անձամբ մոտենալ եւ շնորհակալություն հայտնել մշակույթի տան տնօրեն Արկադի Մարդյանին, գրադարանային բաժնի վարիչ Զոյա Գալստյանին, Վարպետի բանաստեղծություններով գրված երգերը կատարողներին:

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Իմ անսահման երախտագիտությունն եմ հայտնում Գորիսի ֆրանս-հայկական սրտաբանական կենտրոնի երիտասարդ սրտաբան Կարեն Համբարձումյանին՝ բարձր պրոֆեսիոնալիզմի եւ անսահման հոգատարության համար, որի շնորհիվ փրկվեց իմ կյանքը: Իմ շնորհակալությունն եմ հայտնում նաեւ բժշկական կենտրոնի ողջ անձնակազմին:

Միեր Հովհաննիսյան, Մեղրու բնակիչ

ՎԱՃԱՌՎՈՒՄ է Երեք սենյականոց բնակարան, Կապանի Թումանյան 9 շենքի 5-րդ հարկում (թատրոնի հարեւանությամբ): Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել (077) 062802 հեռախոսահամարով:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցում է Խաչիկ Ասրյանին՝ հայրիկի՝ Մայիս Ասրյանի մահվան կապակցությամբ:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին
Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանին
«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենին

Հարգելի՛ պարոնայք

Բնակվում եմ Կապանի Արամ Մանուկյան 1 հասցեում, որտեղ ունեմ օրինական հող ու սեփական տուն: Նախկին ազատամարտիկ եմ, 52 տարեկան, մասնակցել եմ Արցախյան ազատամարտին: 1988-1997թթ. ծառայել եմ հայրենիքիս, նրա սահմանների պաշտպանության ժամանակ երկու անգամ վիրավորվել, այժմ չեմ աշխատում:

Իմ հողատարածքով «Հայջրմուղկոյուղուն» պատկանող ջրի մեծ խողովակ է անցնում, որն ամիսներ առաջ վթարվեց. դրա պայթելուց հետո տարածքում, որտեղ նաեւ իմ տունն է, սողանք առաջացավ՝ վնաս հասցնելով այգուս, վտանգելով նաեւ իմ բնակության պայմանները: Հողն ամեն օր հոսում է, տան ներքեւի հատվածը՝ փլվում: «Հայջրմուղկոյուղին» վերանորոգեց խողովակը, բայց ինձ հասցված վնասի մասին խոսք չեղավ: Տարածք են այցելել քաղաքապետարանից, սողանքներն ուսումնասիրող մասնագետներ են եկել: Ինձ ասվել է, որ այդտեղ բնակվելը վտանգավոր է, որեւէ աշխատանք չի նախատեսվում սողանքը վերացնելու համար եւ հորդորել են բնակվելու այլ կացարան գտնել: Սակայն, նման հնարավորություն չունենալով, շարունակում եմ բնակվել նույն տանը: Ինքս պարբերաբար ստուգում եմ եւ տեսնում, որ ամեն օր հողը նստվածք է տալիս: Գիտեմ նաեւ, թե որտեղ ինչ ամրացման աշխատանքներ կարելի է անել, որ հողը չհոսի, տունն էլ չքանդվի… Քաղաքապետարանից խոստացել էին օգնել շինանյութերով, մինչ օրս չեմ ստացել… Կացարան չեմ խնդրում, պարզապես դիմում եմ ձեզ՝ ակնկալելով օգնություն համապատասխան շինանյութերի տեսքով՝ որոշ շինարարական աշխատանքներ կատարելու եւ բնակությանս վայրն անվտանգ դարձնելու համար: Հուսով եմ՝ խնդրիս պատշաճ արձագանք կտաք:

Սլավիկ Սարգսյան
Կապան քաղաքի բնակիչ

Սյունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 05.12.2014թ.:

Քաղաքը բոլորիս տունն է, եւ մեր առաջնահերթ խնդիրներից մեկը Ագարակի հանդեպ հոգատար վերաբերմունքի ձեւավորումն է

Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանի ելույթը քաղաքի հոբելյանին նվիրված հանդիսավոր նիստում

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

լու համար՝ երկրաբաններ, շինարարներ, հանքագործներ եւ այլն:

Քանի որ յուրատեսակ հաշվետվությամբ մենք ամփոփել ենք քաղաքի պատմության 60 տարին, այժմ ցանկանում եմ հայացք ձգել վերջին հինգ տարվա ագարակյան կյանքին, մեր ձեռքբերումներին ու քաղաքի կյանքի համար էական իրողություններին, մատնանշել մեր հետագա անելիքները:

Ագարակ քաղաքն ի սկզբանե զուտ տնտեսական առաքելություն ուներ: Անկախ Հայաստանում արդեն այն այլ նշանակություն եւ դեր ունեցավ. շարունակելով մնալ մեր երկրի հանքարդյունաբերական կենտրոններից մեկը՝ Ագարակն այդժամ դարձավ նաեւ մեր հանրապետության հարավային սահմանադուռը, դարձավ հաղորդակցության ուղիների հանգուցակետ՝ այստեղ գործում է մաքսակետը, այստեղով միջազգային ճանապարհ է անցնում, նաեւ՝ Իրան-Հայաստան գազատարը, Ագարակում է տեղակայված ՀՀ զինված ուժերի զորամասերից մեկը, այստեղ է տեղակայված բարձրավոլտ էլեկտրական ցանցերի փոխանջատման կետը, որն Ագարակը յուրատեսակ էներգետիկ խաչմերուկ է դարձրել:

Ագարակը մասնակցեց նաեւ հայկական նոր պետականության կերտմանը՝ մասնավորապես մասնակցելով Արցախյան ազատագրական պատերազմին, եւ դրա տրամաբանական շարունակությունն է, որ այն այսօր էլ զինվորական քաղաք է, որտեղ զինվորական ստորաբաժանում է տեղակայված: Մենք ուղղակիորեն մասնակցում ենք հայոց բանակաշինությանը, զինվորն ապրում է ագարակցու կողքին, նա մեր քաղաքի կյանքի մի մասնիկն է, որին ագարակցին գնահատում է:

Բնականաբար, նոր իրավիճակում ու մեզ հասած նոր դերակատարության պարագայում քաղաքի առջեւ քաղաքաշինական, սոցիալ-տնտեսական, կենցաղային եւ տարբեր ենթակառուցվածքների զարգացման նոր պահանջներ ու խնդիրներ առաջացան, որոնց պետք է լուծում տային տարածքային եւ տեղական իշխանությունները:

Անհրաժեշտություն առաջացավ համայնքում հիմնել որոշ ծառայություններ՝ բանկային, փրկարար եւ այլն, տարանցիկ բնակավայր լինելով՝ զարկ տալ հյուրանոցային տնտեսությանը, ունենալ ժամանցի վայրեր, հանրապետության մուտք հանդիսանալով՝ բարեկարգել ճանապարհները եւ այլն:

Լինելով զարգացող քաղաք բնակչության մեջ երիտասարդ ընտանիքների գերակշռումով՝ Ագարակի համար կարեւոր է բնակարանային շինարարությանը զարկ տալը. ներկայումս քաղաքային իշխանությունները տարբերակներ են փնտրում հարցի լուծման համար, բայց ողջունելի է, որ քաղաքում թափ է առնում անհատական բնակելի տների շինարարությունը: Նշանակում է՝ ագարակցին իր ապագան ու իր զավակների վաղվա օրը տեսնում է ա՛յս քաղաքում: Բնակարանային հարցի լուծմանը կնպաստի քաղաքի հիվանդանոցի շենքը համայնքին տրամադրելը՝ տարածաշրջանում նոր հիվանդանոցի կառուցումից հետո, որը նախատեսվում է 2015-ին: Մեր քաղաքն այն քիչ բնակավայրերից է, որտեղ վերջին տարիներին բնակչության թվի կայուն աճ է ապահովվել. Ագարակն այսօր մոտ 5000 բնակիչ ունի:

Բավականին լուրջ աշխատանքներ են իրականացվել Ագարակի խմելու ջրի մատակարարման ոլորտում, որը նախկինում միշտ էլ խնդիր է եղել. այսօր ունենք նորոգված եւ ժամանակակից մաքրման կայան, խմելու ջրի հիմնանորոգված ներքին ցանց, եւ այդ ամենի արդյունքում Ագարակն առաջիններից մեկն էր տարածաշրջանում, որ ունեցավ 24-ժամյա ջրամատակարարում:

Քաղաքի ներսում նաեւ ներհամայնքային ճանապարհներ են հիմնանորոգվել, փողոցներ ասֆալտապատվել:

Քաղաքը պետք է ունենա նաեւ իր մշակութային եւ սպորտային ուրույն դեմքը, իբրեւ նորաստեղծ համայնք՝ Ագարակն այդ ոլորտներում առանձնապես աչքի չի ընկել: Բայց վերջին տարիներին աստիճանաբար հաջողություններ ենք արձանագրում նաեւ այդ ոլորտներում, անում առաջին քայլերը, որ համայնքը համարվի նաեւ մշակութային ու սպորտային քաղաք. ձգտում ենք հասնել դրան, եւ հաջողության հիմքերն արդեն տեսանելի են: Այսօր ունենք վերանորոգված եւ նոր կահավորանքով ապահովված մշակույթի կենտրոն, խաղահրապարակներ: Օրակարգում է քաղաքում միջազգային չափանիշներով մարզադահլիճ, այնուհետեւ առանձին կարգավիճակով մարզադպրոց ունենալու հարցը: Իսկ ազատ ոճի մեր պատանի ըմբշամարտիկներն արդեն իսկ մասնակցում են միջազգային մրցաշարերի, վերադառնում հաղթանակներով:

Ինչ վերաբերում է կրթական ոլորտին, ունենք բնականոն եւ ակտիվորեն գործող արվեստի դպրոց, որի հիմնանորոգման աշխատանքները եւս ընթացքի մեջ են: Ունենք նաեւ լավ ավանդույթներով, մանուկների խնամքով ու դաստիարակությամբ աչալուրջ զբաղվող, վերանորոգված եւ ժամանակակից կահավորանքով մանկապարտեզ: Ագարակի միջնակարգ դպրոցում աշակերտների թվի աճին զուգահեռ օրակարգում է դպրոցական նոր մասնաշենքի կառուցումը, որի համար առաջին հատկացումը ՀՀ կառավարությունից կլինի 2015 թվականին:

Այսօր զանազան հոգեւոր արարողությունների, եկեղեցական տոների ժամանակ ագարակցին ստիպված է Մեղրի հասնել: Ուստի, քաղաքը պետք է ունենա նաեւ իր հոգեւոր տաճարը: Այս ուղղությամբ եւս առաջին քայլերն են արվել: Եկեղեցու շինարարության համար տարածք է հատկացվել, եւ քաղաքի մուտքի մոտ եկեղեցի կկառուցվի:

Մեր գրանցած հաջողությունների մեջ անուրանալի եւ գնահատելի է Սյունիքի մարզպետ, Ագարակի պատվավոր քաղաքացի Սուրեն Խաչատրյանի եւ նրա ղեկավարած կառույցի՝ Սյունիքի մարզպետարանի դերը: Տարածքային կառավարման մարմնի հետ համագործակցությամբ են պայմանավորված նաեւ մեր համայնքի վաղվա օրն ու հետագա զարգացումը: Բոլոր ագարակցիների անունից շնորհակալություն ենք հայտնում պարոն Խաչատրյանին՝ մեր քաղաքի հանդեպ նման վերաբերմունքի, բարձրացված հարցերին հնարավորության սահմաններում արագ լուծումներ տալու եւ քաղաքային իշխանության հետ կառուցողական հարաբերությունների համար:

Եվ, այդուհանդերձ, Ագարակը ստեղծվել ու այսօր էլ մնում է նախեւառաջ արդյունաբերական քաղաք: Մեր համայնքի կյանքում անչափ կարեւոր եւ որոշիչ է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի դերը, իսկ համայնքային իշխանության համար՝ համագործակցությունը քաղաքաստեղծ ձեռնարկության հետ: Մեր բոլոր լավատեսական ծրագրերի հիմքը կոմբինատի ներշնչած հույսն է՝ որպես քաղաքի հիմնական ու խոշոր գործատու եւ որպես տեղական ինքնակառավարման մարմինների վստահելի գործընկեր: Նրա շուրջն է կառուցվել Ագարակը, եւ այսօր էլ այն շարունակում է իր քաղաքաստեղծ առաքելությունը: Բավական է միայն ասել, որ համայնքային բյուջեի մուտքերի 20 տոկոսն անհատույց հատկացնում է հանքարդյունաբերական այդ ձեռնարկությունը: Եվ քանի որ կոմբինատը զարգացման ու ծավալների ընդլայնման ծրագրեր ունի, բնականաբար, մեր բնակչությունն էլ պիտի ավելանա, ու քաղաքն էլ պիտի պատրաստ լինի դրան՝ քաղաքաշինական եւ մյուս բոլոր առումներով:

Մեր քաղաքը դեռեւս դժվար է պատկերացնել առանց կոմբինատի կայուն ու արդյունավետ աշխատանքի, գործունեության բնականոն հունի: Նրանով եւ նրա շուրջ է Ագարակում պայմանավորված ներկայի եւ վաղվա յուրաքանչյուր անելիք: Նրա ակտիվ մասնակցությամբ մեր քաղաքում շատ խնդիրներ են լուծվում, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում «Գեոպրոմայնինգ» ընկերությունների միջազգային խմբին, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ղեկավարությանը, գլխավոր տնօրեն, Ագարակի պատվավոր քաղաքացի Սերգեյ Պոլովինկինին: Եվ քանի որ պարոն Պոլովինկինը պատրաստվում է թողնել Ագարակն ու տեղափոխվել այլ աշխատանքի, ցանկանում ենք բոլոր ագարակցիների անունից շնորհակալություն հայտնել նրան իր աշխատանքային այս տարիների արդյունավետ գործունեության, մեր քաղաքի բարեկամը լինելու, ագարակցի հանքագործի կողքին կանգնելու, ագարակցու հոգսերը կիսելու եւ համայնքին աջակցելու համար: Միաժամանակ ողջունում ենք «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերության նոր տնօրենին, ով գալիք տարում պետք է ստանձնի այս ձեռնարկության ղեկավարումը, եւ մեր բարի կամքն ու պատրաստակամությունը հայտնում՝ շարունակելու սերտ համագործակցությունը՝ ի շահ Ագարակի եւ ագարակցու:

Այսօր առիթ է նաեւ խոսել մեր առջեւ ծառացած խնդիրների եւ հետագա անելիքների մասին:

Հանքարդյունաբերական քաղաքում, բնականաբար, առաջին հերթին տեղին է հիշել բնապահպանության մասին, ինչը եւս համայնքային իշխանության ուշադրության կենտրոնում է: Մեր տարածքում քիչ են կանաչ գոտիները, եւ նախատեսում ենք ավելացնել դրանք, ինչն առավել իրատեսական կդառնա հատկապես ինքնահոս ոռոգման համակարգի ներդրումից հետո, որի աշխատանքներն այժմ ընթացքի մեջ են: Ի դեպ, այդ համակարգի կառուցման հետ մեծ հույսեր ենք կապում նաեւ այն առումով, որ այն մեր տարածաշրջանում զարկ կտա այգեգործությանը:

Ինչ վերաբերում է բազում խոսակցությունների տեղիք տվող կոմբինատի վթարային թափուկատարին, նշեմ, որ «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը 2015-ին նախատեսում է վերանորոգել այն:

Լինելով Հայաստանի հարավային սահմանադուռ, մեզ դեռեւս լիովին չի հաջողվել լիարժեք օգտագործել Ագարակ-Իրան հարաբերությունների ներուժը: Նման խոշոր պետության հարեւան լինելը պետք է որ նպաստի մեր համայնքի զարգացմանը, եւ մեր հետագա գործունեության մեջ առաջին պլանում պետք է լինի հայ-իրանական հարաբերությունների խորացումը, առկա տնտեսական պոտենցիալի իրացումը: Մտադիր ենք առավել մերձեցնել ու գործնական հիմքերի վրա դնել իրանական Զուլֆա քաղաքի հետ հարաբերությունները:

Եթե կյանքի կոչվի հայ-իրանական սահմանի վրա «Սյունիք» ազատ տնտեսական գոտու ստեղծման նախագիծը, ապա այն զարգացման նոր հեռանկարներ կբացի մեր քաղաքի համար:

Պետք է նշել նաեւ, որ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի միանալուց հետո Ագարակը նոր դեր ու նշանակություն կստանա՝ դառնալով արդեն ոչ միայն Հայաստանի, այլեւ Եվրասիական տնտեսական միության սահման: Սա բացում է նոր ապրանքաշրջանառության, նոր հարաբերությունների հեռանկար: Դրան պատրաստ լինելու առաջին քայլերից մեկը տարածքում նոր մաքսային պահեստի կառուցումն է, որն ընթացի մեջ է:

Իր ներկա լուրջ դերակատարումներում եւ նախանշվող ապագայով Ագարակ քաղաքը, բնականաբար, պիտի գա եւ հասնի նշված առաքելություններն իրականացնողին վայել տեսքին՝ բարեկարգվելով եւ զարգացնելով համապատասխան ենթակառուցվածքները: Գուցե միանգամից դա տեսանելի չէ, բայց դրա համար ամեն օր քարի վրա քար է դրվում:

Մեր քաղաքի կյանքի բնականոն հունի ապահովման համար անչափ կարեւոր եմ համարում նաեւ համագործակցությունը թե՛ Սյունիքի մարզպետարանի, թե՛ մեր առօրյա կյանքին մասնակցող եւ թե՛ մեր տարածքում գործող կազմակերպությունների հետ՝ Մեղրու մաքսակետ, ՌԴ սահմանապահ ջոկատ, Ագարակի զորամաս, նորաստեղծ բանկային կառույց, Փրկարար ծառայություն, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ եւ այլ կառույցներ, ինչի համար շնորհակալություն եմ հայտնում բոլորին:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում իր տեսակով եզակի «Մեղրի-Ագարակ» հիմնադրամին՝ իր բոլոր նվիրատուներով, իսկ նվիրատուն Ագարակի բնակչության մեծ մասն է, այստեղ իր աշխատավարձից ներդրում է կատարում շարքային ագարակցին, եւ այս միջոցներով քաղաքում շատ հարցեր են լուծվում: Միաժամանակ կոչ եմ անում առավել լայն հնարավորությունների տեր ագարակցիներին՝ նաեւ դրսում բնակվող, անմասն չմնալ հայրենի քաղաքի զարգացմանը նպաստ բերելուց, այստեղ ներդրումներ կատարելուց, ինչին համայնքային իշխանությունը պատրաստ է աջակցել իր իրավասությունների շրջանակում:

Քաղաքը բոլորիս տունն է, եւ մեր առաջնահերթ խնդիրներից մեկը Ագարակի հանդեպ հոգատար վերաբերմունքի ձեւավորումն է:

Այս տարիների ամենամեծ ձեռքբերումը մեր քաղաքի համար ես համարում եմ, ի վերջո, ագարակցու հավաքական կերպարի ստեղծումն ու ընկալումը. Ագարակում ապրում է արդեն մի սերունդ, որի համար կա զուտ ագարակցի հասկացությունը:

Իմ համաքաղաքացիներին շնորհակալ եմ նաեւ այն բանի համար, որ ըմբռնումով են մոտենում համայնքային իշխանության քաղաքականությանը, տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնություններին, շնորհակալ եմ, որ մենք մի թիմ ենք, եւ մեր միասնականության շնորհիվ ենք հաջողություններ արձանագրում: Դա է ուժ եւ հավատ ներշնչում վաղվա օրվա հանդեպ: Մեր քաղաքի բնակիչները մեզ համար կարեւոր որոշումներում համախմբված են, եւ Ագարակի հաջողության գլխավոր գրավականն ագարակցիների միասնությունն է: Դրա վկայությունն էր նաեւ այն, որ 2012թ. Ագարակը ճանաչվեց հանրապետության լավագույն քաղաքային համայնք:

Եվս մեկ անգամ շնորհավորելով բոլորիս Ագարակի տարեդարձի կապացությամբ՝ մեր քաղաքին մաղթում եմ տնտեսական վերելք, խաղաղ սահման, առավել բարեկարգ ու նորոգ արտաքին տեսք, իսկ նրա բնակիչներին՝ առողջություն եւ բարեկեցություն:

■

Ագարակ քաղաքն է 65 տարեկան է

Ագարակ քաղաքը 65 տարեկան է

Քաղաքի 65-ամյակին նվիրված հանդիսությանը ելույթ ունեցավ նաեւ Ագարակի արվեստի դպրոցի երգչախումբը

Ագարակը ծաղկուն եւ բարեկեցիկ դարձնելու մտահոգությամբ

ՎԻԼԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

«Մեղրի-Ագարակ» հիմնադրամի տնօրեն



Անցած հինգ տարվա ընթացքում «Մեղրի-Ագարակ» հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվել են բազմաթիվ ծրագրեր: Մասնավորապես.
1. վերանորոգվել է Ագարակի N1 մ/մանկապարտեզի զույգ մասնաշենքը, գնվել են մանկական մահճակալներ, գույք, սարքավորումներ, գրենական պիտույքներ, խաղահրապարակում տեղադրված կարուսելը նույնպես ձեռք է բերված հիմնադրամի ֆինանսավորմամբ,
2. ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն Ագարակ քաղաքի միջնակարգ դպրոցին՝ դասասենյակների վերանորոգման, նոր դռների, կահույքի ձեռքբերման համար,
3. արվեստի մանկական դպրոցին տրամադրվել է գումար դաշնամուրի եւ պարային զգեստների ձեռքբերման համար,
4. «ԾՄԱԿ» մարզամշակութային պալատի ռոյալի ձեռքբերումը նույնպես իրականացվել է հիմնադրամի միջոցներով, ձեռք են բերվել նաեւ ծանրաձողեր նույն հաստատության համար,
5. իրականացվել է Ագարակի Չարենցի փողոցի լուսավորության եւ կանաչապատման ծրագիրը, իսկ Սայաթ-Նովա 3/2 հասցեում շահագործման հանձնված խաղահրապարակը կառուցվել է «Մեղրի-Ագարակ» հիմնադրամի համաներդրմամբ,
6. հիմնադրամն է հոգում Ագարակ քաղաքի աշակերտների դպրոցական օլիմպիադաների, շախմատի եւ այլ մրցաշարերի մասնակցելու, ամառային արձակուրդներին ճամբար մեկնելու տրանսպորտային ծախսերը,
7. հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ են կազմակերպվել եւ անցկացվել տոնակատարություններ ու զանգվածային այլ միջոցառումներ,
8. հիմնադրամը տրամադրել է դրամական օգնություն անապահով ընտանիքներին, պատերազմի վետերաններին:
Ապագայում իրականացվելիք ծրագրերի մի մասը գտնվում է քննարկման փուլում: Որոշվել է փոքր-ինչ փոխել հոգաբարձուների խորհրդի նիստերի ձեւաչափը եւ առաջիկայում գումարել նիստեր ընդլայնված կազմով: Խորհրդի նիստերին կհրավիրվեն աշխատանքային կոլեկտիվների ներկայացուցիչներ՝ ապագա ծրագրերին ծանոթանալու եւ դրանց քննարկմանը մասնակցելու նպատակով: ■

Շնորհավորանք

ՍԱՄՎԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ արհեստակցական կազմակերպության նախագահ

Տասնամյակներ առաջ մի խումբ մասնագետների, երկրաբանների, նախագծողների, շինարարների ջանքերի շնորհիվ կառուցվեց Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը, որի արդյունքում հիմնադրվեց նաեւ Ագարակ քաղաքը: Սա նշանակում է, որ կոմբինատը եւ քաղաքը տարանջատ հասկացություններ չեն եւ չեն կարող լինել: Եվ տարիներ ի վեր, կոմբինատի զարգացմանը զուգահեռ, Ագարակում քարի վրա քար է դրվել:
Այսօր «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը հանքարդյունաբերական հզոր ձեռնարկություն է, որն ունի 1000-ից ավելի աշխատող: Այո՛, կոմբինատն ունեցել է ֆինանսական խնդիրներ, բայց մենք միասին կարողացել ենք բարձր պահել աշխատանքային կարգապահությունը եւ կոլեկտիվում ապահովել բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ: Ապագային նայել ենք հավատով եւ ապրել անխախտ համոզմամբ, որ բոլոր դժվարությունները հաղթահարելի են, եւ վստահ ենք եղել, որ առանց կոմբինատի չկա ծաղկուն Ագարակ:
Վերջին տարիներին մեր կազմակերպության միջոցներով հիմնովին նորոգվեցին Ագարակի միջնակարգ դպրոցի տասնյակից ավելի դասասենյակներ:
Անհրաժեշտ պարագաներով օգնել ենք քաղաքի մանկապարտեզին եւ արվեստի դպրոցին: Եվ այս ամենը՝ ձե՛ր շնորհիվ, սիրելի՛ կոմբինատցիներ:
Անցյալում է մնացել այն դժվար եւ տհաճ ժամանակաշրջանը, երբ ժամանակավորապես չաշխատեց կոմբինատը: Չպետի մոռանանք այն իրողությունը, որ այդ պահին ագարակցու կողքին էր հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, եւ վերագործակվեց կոմբինատը: Չենք մոռացել անցած համաշխարհային տնտեսական ճգնաժամը, երբ կրկին մեր նախագահի որոշմամբ կոմբինատին հատկացվեց 14մլն դոլարի վարկ՝ հնարավորություն ընձեռելով ոչ միայն հաղթահարել ֆինանսական դժվարությունները, այլեւ սկսել տեխնիկական վերազինման նոր գործընթաց: Մենք չենք մոռացել այն ժամանակները, երբ Ագարակի կոմբինատի աշխատողների ճակատագրով մտահոգվեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը. նրա միջամտությամբ հնարավոր եղավ խուսափել աշխատողների մեծաթիվ կրճատումից:
Այո՛, Ագարակն իր տեղը պիտի գտնի Հայաստանի ծաղկուն քաղաքների շարքում:
Շնորհավո՛ր տոնդ, Ագարակ:
Ցանկանում եմ բոլորիդ ամուր առողջություն, եւ թո՛ղ մեզ շրջապատող լեռների պես միշտ լինեք անսասան եւ կանգուն: ■

Նրանց շնորհվել է Ագարակի պատվավոր քաղաքացու կոչում

Անահիտ Արտավազդի Անտոնյան

Կրթության բնագավառում ունեցած մեծ վաստակի եւ մատաղ սերնդի դաստիարակության գործում ներդրած նշանակալի ավանդի համար



Լիբիկ Հարությունի Օհանյան

«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ում երկարամյա անբասիր աշխատանքի, համայնքի տնտեսական զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար



Լյուդվիգ Պապվականի Համբարձումյան

«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ում երկարամյա անբասիր աշխատանքի, համայնքի տնտեսական զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար



Սերյոժա Գրիգորի Գաբրիելյան

«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ում երկարամյա անբասիր աշխատանքի համար

Համայնքի ընթացքը.

թվեր եւ փաստեր

ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼՅԱՆ

Ագարակի քաղաքապետի տեղակալ

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

գում, որի շնորհիվ այսօր ներհամայնքային նշանակության ճանապարհների 52 տոկոսն ասֆալտապատ է: Ավարտին են մոտենում Ագարակը մաքսակետին կապող 800մ երկարությամբ ճանապարհի շինարարական աշխատանքները:

2011թ. համայնքային բյուջեի ֆոնդային միջոցներով վերանորոգվել են քաղաքապետարանի վարչական շենքն ու հարակից տարածքը, իսկ 2013-ին շահագործման է հանձնվել քաղաքի հասարակական զուգարանը:

«Հայփոստ մենեջմենտ» ծրագրի շրջանակներում վերանորոգվել է «Հայփոստ» ՓԲԸ Ագարակի մասնաճյուղի շենքը:

Կառուցվել եւ շահագործման է հանձնվել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի վարչական շենքը:

2011-12թթ. վերանորոգվել են քաղաքի երկու կանգառները, իսկ երրորդի վերանորոգումը նախագծանախահաշվային փուլում է:

2009թ. ստեղծվել եւ գործում է Ագարակի հրշեջ փրկարարական ջոկատը:

2010թ. գործում է ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Մեղրու բաժնի Ագարակի բաժանմունքը:

2011թ. ստեղծվել եւ բանկային ծառայություններ է մատուցում «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Ագարակի մասնաճյուղը:

Այս ամենին զուգընթաց համայնքում մշակվում եւ իրականացվում են ծրագրեր, որոնք ներառված են համայնքի քառամյա զարգացման ծրագրում: Մասնավորապես նախատեսվում է.

- 2015թ.՝ նոր տարածաշրջանային բուժհաստատության շահագործումից հետո, Ագարակի հիվանդանոցի ներկայիս տարածքն օգտագործել որպես բնակարանային ֆոնդ մոտ 20 երիտասարդ ընտանիքի համար,
- 2015թ. պետբյուջեի հատկացրած միջոցներով վերակառուցել դպրոցին հարակից մասնաշենքը, որից հետո դպրոցի շենքային պայմանները կհամապատասխանեցվեն աշակերտների թվին,
- նախկին կաթսայատան շենքում ստեղծել ժամանակի պահանջներին համապատասխանող մարզադպրոց,
- իրականացնել Ագարակի քաղաքային մարզադաշտի կապիտալ վերանորոգման ծրագիր,
- քաղաքի գլխավոր ճանապարհներում ավելացնել լուսացույցներ եւ ճանապարհային նշաններ,
- բարեկարգել մոտ 2կմ ներհամայնքային նշանակության ճանապարհներ,
- բարեկարգել բազմաբնակարան շենքերի բակային տարածքները եւ կառուցել խաղահրապարակներ:

Այս եւ բազմաթիվ այլ ծրագրերի իրագործումը համայնքի զարգացման գլխավոր ռազմավարությունն է, եւ փորձը ցույց է տալիս, որ մեր քաղաքի բնակչության վստահությամբ ու համախմբվածությամբ, ինչպես նաեւ ՀՀ իշխանությունների աջակցությամբ պատվով կհաղթահարենք այն բոլոր դժվարությունները, որոնք կառաջանան մեր քաղաքը շենացնելու ճանապարհին: ■